

ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՕՐՀՆԵՐԳՈՒՆԵՐԸ

ՀԵՆՐԻԿ ԲԱԽԶԻՆԵԱՆ
litart.yerevan@gmail.com

Ե. դարում սկզբնաւորում է հայ ազգային եկեղեցական երգ-երա-
ժշտութիւնը՝ նախ թարգմանական, ապա նաեւ ինքնուրոյն բնագրերի
հիման վրայ: Ըստ այդմ ծնունդ է առնում հայ պաշտօնական օրհներ-
գութիւնը (կցուրդներ, ապա՝ շարականներ), որը նշանաւորում է վաղ
միջնադարի հայ անհատական բանաստեղծութեան սկզբնաւորումը¹:

Հայերէն առաջին օրհներգերը կամ կցուրդները ստեղծել են Մես-
րոպ Մաշտոցը եւ Սահակ Պարթեւը՝ իրենց իսկ արարած ձայնեղա-
նակների, իրենց իսկ կազմած Մաղմոսարանի եւ հայ եկեղեցական տօ-
նացոյցի հիման վրայ:

Մեսրոպ Մաշտոցի վարքագիր Կորիւնի եւ Ոսկեդարի խոշոր պատ-
միչներ Մովսէս Խորենացու եւ Ղազար Փարպեցու վկայութիւններից
մականգնում է, որ մեծ ուսուցչապետը զբաղուել է նաեւ երգ-երաժշ-
տութեամբ, այն ուսուցանել է իր սաներին եւ գրերի գիւտից յետոյ մե-
ծապէս նպաստել «հասարակաց աղօթք»ի եւ եկեղեցական ծիսակարգի
հայացմանն ու ճոխացմանը:

Յետագայ սկզբնաղբիւրներն արդէն որոշակիօրէն վկայում են, որ
Մաշտոցը (Սահակ Պարթեւի հետ) կարգաւորել է հայ եկեղեցական եր-
գերի ձայնեղանակները, հեղինակել է ինքնուրոյն հոգեւոր երգեր, եւ
նրան են պատկանում Պահոց կամ Ապաշխարութեան կարգի օրհներգե-
րը:

Հայ եկեղեցու ընդունած *Շարահնոց* ծիսարանի ցանկում ասուած է
հետեւեալը՝ «Նախ՝ սուրբն Իսահակ եւ սուրբն Մեսրոպ՝ ասացին
գութն եղանակատր ձայնսն, եւ երկու ձայն ստեղիս:

Ա. Ապա՝ սուրբն Իսահակ՝ գ՛ւազարուն, եւ զկարգն Աւագ շաբա-
թուն:

Բ. Եւ սուրբն Մեսրոպ՝ զկարգն Ապաշխարութեան»²:

Մի շարք ուսումնասիրողներ, այդ թւում նաեւ Մանուկ Աբեղեանը,
գտել են, որ Ապաշխարութեան կարգի բոլոր երգերը չեն կարող մէկ հե-
ղինակի գործ լինել, քանի որ դրանք ունեն լեզուաոճական բաւականին
տարբերութիւններ: «Եթէ Ս. Մեսրոպը հեղինակ է ապաշխարութեան
շարականների, նա առանձին երգեր միայն յօրինած պիտի լինի եւ ոչ

մի անբողջ կանոն»³։ Եւ քանի որ Ե. դարում օրհներգերի համար կանոնը տակաւին սահմանուած չի եղել, ուստի եւ Ապաշխարութեան կարգին պատկանող երգերի թուաքանակն ու դասաւորութիւնը ուրիշ են եղել։

Աստուր Մնացականեանը եւ Նիկողոս Թահմիզեանը ձեռագրական տուեալների հիման վրայ քննել են Մաշտոցին վերագրուած երգերի ու դրանց թուաքանակի խնդիրը՝ կատարելով արժէքաւոր ճշտումներ⁴։ Ըստ այդմ, Մաշտոցի յօրինած օրհներգերը պիտի փնտռել Շարակնոցի Ապաշխարութեան կարգի ութ երգաշարքերի մէջ⁵։ Դրանցում երգերի քանակը կազմում է 157 միաւոր։ Սրանց պիտի աւելացնել այն ութ երգերը, որոնք յետագայում ինչ-ինչ պատճառով դուրս են մնացել կանոնական ծիսարանից եւ դարձել պարականոններ։ Ըստ այսմ, մաշտոցեան օրհներգերի ընդհանուր թիւը կազմում է 165 միաւոր, աւելի ստոյգ՝ 164, քանի որ պարականոններից մէկը («Ուրախացի՛ր, Աստուածածի՛ն» Մեծացուսցէն) վստահաբար Մաշտոցի հեղինակածը չէ։

Այս օրհներգերից 44ը Հարցներ են, 46ը՝ Ողորմեաններ, 46ը՝ Տէր Յերկնիցներ, 10ը՝ Մանկունքներ, 11ը՝ Համբարձիներ, եւն.։

Բանասիրական ու երաժշտագիտական հիմնաւոր քննութիւնը Թահմիզեանին բերել է այն եզրայանգման, որ Ապաշխարութեան կարգի Ողորմեանների մէջ «համեմատաբար աւելի շատ կան ձեռով ու բովանդակութեամբ հնութեան դրոշմ կրող եւ լեզուական տեսակետից էլ համեմատաբար անաղարտ վիճակում պահպանուած երգեր»⁶։ Ահա թէ ինչու Աբեղեանը Մաշտոցին վերագրուող երգերից անդրադարձել է (թէ եւ խիստ վերապահումով) միայն Ողորմեաններին։

Անշուշտ, չի կարելի պնդել, որ Ապաշխարութեան կարգի յիշեալ ութ երգաշարքերի բոլոր Ողորմեանները եւ միւս երգերը, Մնացականեանի խօսքերով ասած, «անբողջապէս եւ նոյնութեամբ Մեսրոպ Մաշտոցի գրչի արդիւնքն են։ Հնարատր է, որ ժամանակի ընթացքում նրանց մէջ մտած լինեն որոշ բոլով ուշ շրջանի երգեր, հներից մի քանիսը դուրս մնացած լինեն, փոփոխութիւն կրած լինի նրանց լեզուն եւ այլն»⁸։

Այս ամէնով հանդերձ, մենք համոզուած ենք, որ նշուած օրհներգերը հիմնականում ստեղծուած են Ե. դարում, եւ դրանց մեծագոյն մասի հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է։ Մաշտոցին վերագրուած երգերն, այս վերապահութեամբ, ճիշտ ենք համարում կոչել մաշտոցեան օրհներգեր։

Պահքի կամ Ապաշխարութեան կարգը, բաժանուած է ութ երգաշարքերի եւ նուիրուած է քրիստոնէական եկեղեցու ամենամեծ տօնի՝

Յարութեան համար սահմանուած Մեծ Պահքի քառասնօրեայ ապաշխարութեան շրջանին: «Սահակն ու Մեսրոպը,- գրում է Գրիգոր Յակոբեանը,- երբ ձեռնարկեցին հայացնելու եկեղեցու ժամերգութիւնը, հենց այդտեղից՝ Մեծ պահքից էլ սկսեցին: Մաշտոցը գրեց Մեծ պահքի վեց շաբաթների ապաշխարութեան բազմաթիւ շարականներ, մնացած վերջին շաբաթի շարականները... վերագրում են Սահակին»⁹:

Մաշտոցի օգտագործած երգատեսակները թէեւ տարբեր են իրենց կազմութեամբ ու բովանդակութեամբ, սակայն դրանք բոլորն էլ այս կամ այն չափով ունեն ապաշխարական բնոյթ, ինչը Պահոց կարգի պահանջն է:

Մաշտոցեան երգերը, ինչպէս բնորոշ է առհասարակ հայ օրհներգութեանը, բաժանուած են տների, ինչը հայ քրիստոնէական մշակոյթի կառուցիկութեան արտայայտութիւններից է: Ըստ երեւոյթին, Սուրբ Երրորդութեան գաղափարաբանական հիմքի վրայ հայ առաջին օրհներգերը բաժանուած են երեք տների: Մաշտոցեան երգերում պատահում են նաեւ չորս տների- դա, կա՛մ յետագայ միջամտութեան արդիւնք է, կա՛մ էլ հեղինակը հետեւել է քրիստոնէական մէկ այլ խորհրդանշական թուի՝ չորսին (քառաթեւ խաչ, չորս աւետարանիչներ, քառակերպ քերովբէներ եւն.):

Մաշտոցեան օրհներգերն ունեն 1-2 բառից մինչեւ 1-2 տող կազմող կրկնակներ (դարձեր), որոնք աւելի հնչեղ, աշխոյժ ու ազդեցիկ են դարձնում ասելիքը, թելադրուած լինելով նաեւ երգային եղանակաւորումներից: Նշենք նաեւ, որ երգերի տները բաղկացած են տարբեր քանակութեամբ (մէկ եւ աւելի) եւ ազատ տաղաչափութեամբ անհաւասար տողերից, որոնցից իւրաքանչիւրը, սովորաբար, մի ամբողջական շարահիւսական միաւոր է:

ՄԱՇՏՈՑԵԱՆ ՕՐՀՆԵՐԳԵՐ

Շարականացում Պահոց կարգի ութ երգաշարքերը սկսւում են մէկական Հարցներով եւ Գործքերով, որոնց կայուն հերթականութեամբ յաջորդում են միւս երգատեսակների մէկական օրինակներ, եւ այդպէս՝ մինչեւ տուեալ երգաշարքի աւարտը: Շարականացում ամփոփուած մաշտոցեան օրհներգերից 44ը Հարցներ են՝ իրենց յաջորդող համապատասխան Գործքերով:

Մաշտոցեան Հարցները մեծ մասամբ, այս կամ այն չափով, յարասում են կամ ակնարկում Դանիէլի մարգարէութեան մէջ ընդգրկուած Երից Մանկանց զրոյցը (Գլ. Գ.), ուստի եւ ունեն պատմողական կամ վի-

պական բնոյթ: Սակայն կան նաեւ մի շարք մաշտոցեան Հարցներ, որոնք ամենեւին չեն առնչուում այդ զրոյցին: Դրանք կա՛մ յետագայ հեղինակների գործեր են, կա՛մ էլ Մաշտոցն ինքը արդէն իր այդ երգերն անկախացրել է աստուածաշնչեան պատումից:

Մաշտոցեան Գործքերը յաջորդելով Հարցներին եւ վերջիններիս աղերսուելով ներքին իմաստով ու տրամադրութեամբ, հիմնականում կրում են օրհնաբանական-ապաշխարական բնոյթ: Ընդ սմին կան նաեւ մի շարք Գործքեր, որոնց մէջ եւս այս կամ այն չափով յարասուում կամ ակնարկուում է նրից Մանկանց զրոյցը: Այսինքն՝ մաշտոցեան Հարցները եւ Գործքերը թէ՛ պատմողական եւ թէ՛ աղօթքային երգատեսակներ են:

Աստուածաշնչեան նշուած զրոյցի մէջ պատմուում է, թէ ինչպէս Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը մի ոսկեծոյլ կուռք է կանգնեցնում եւ ստիպում, որ բոլորը երկրպագեն կուռքին: Բաբելոնեան գերութեան մէջ գտնուող հրեաներից երեք հաւատաւոր պատանիներ (մանկունք)՝ Սեդրաքը (Անանիան), Միսաքը եւ Աբեղնագովը (Ազարիան), չուրանալով իրենց հաւատը՝ հրաժարուում են ենթարկուել թագաւորի կամքին: Վերջինս հրամայում է վառուող հնոցը նետել նրանց: Սակայն իրենց հաւատով տոգորուած մանուկներն անվնաս են մնում թեժ կրակի մէջ, եւ նրանցից մէկը՝ Ազարիան, ջերմեռանդ աղօթում է Աստծուն: Աստուած ուղարկում է իր հրեշտակին, որը մանկանց գերծ է պահում այրող բոցերից, եւ այդժամ անձնուրաց երեք մանուկները միաբերան օրհնաբանում են Տիրովը: Տեսնելով այդ հրաշքը, Նաբուգոդոնոսորը նրանց հանել է տալիս հնոցից, մեծարում է նրանց եւ ինքն էլ օրհնաբանում է Խորայէլի Աստծուն:

Այս զրոյցն, ինչպէս երեւում է, չափազանց գրաւել է Մաշտոցին, որն այդ թեմայով յորինել է 44 Հարցն եւ նոյնքան Գործք երգեր՝ կցորդելով դրանք հայկական Մաղմոսարանում ընդգրկուած երեք մանկանց «Օրհնեալ ես, դու, Տէ՛ր Աստուած հարցն մերոց» սկսուածքով օրհնութեանը եւ վերջինիս «Օրհնեցէ՛ք ամենայն գործք Տեառն» սկսուածքով հատուածին:

Արդեօ՞ք քրիստոնէական հաւատի հայ մեծ քարոզչին գրաւել է այդ զրոյցի սոսկ կրօնական-վկայաբանական գաղափարաբանութիւնը: Ո՛չ, այստեղ կայ մէկ այլ կարեւոր հանգամանք, որը մատնացոյց է արել Մնացականեանը՝ վկայակոչելով Ազարիայի աղօթքի հետեւեալ տողերը.

Օրհնեա՛լ ես, Տէ՛ր Աստուած հարցն մերոց...

Եւ մատնեցեր ըզմեզ ի ձեռքս քըշնամեաց մերոց՝

Անօրինաց խստաց եւ ապստամբողաց,
 Եւ քագաւորի անիրաւի եւ չարի, քան զամենայն երկիր...
 Եւ եմք տառապեալք յամենայն երկրի այսօր...
 Եւ ոչ գոյ... ո՛չ ողջակէզք եւ ո՛չ զոհք...
 Այլ անձամբք բեկելովք եւ հոգւովք տառապանաց
 Ընդունելի լիցուք իբրեւ զողջակէզքս...
 Եւ յամօք լիցին ամենեքեան, ոյք ցուցանեն չարիս ծառայից քոց.
 Եւ ամաչեսցեն յամենայն բոնութեան իւրեանց,
 Եւ զօրութիւն նոցա խորտակեսցի...¹⁰

Մնացականեանը սա իրաւամբ համարել է «գերուած եւ հալածուած մի ամբողջ ժողովրդի ողբ՝ իր դառն վիճակի եւ վրէժխնդրութեան մասին: Ի՞նչը կարող էր աւելի համահնչուն լինել մաշտոցեան օրերի քաղաքական իրականութեանը, քան այդ գրոյցը՝ իր ամբողջութեամբ: Այդ գրոյցի եւ համապատասխան երգերի ընթերցումը եկեղեցիներում ու հասարակական հաւաքոյթներում՝ բաւական կը լինէր, որ հայ մարդիկ նրա մէջ տեսնէին նաեւ իրենց բարելոնեան գերութիւնը եւ դրանով իսկ բորբոքէին ատելութեան, վրէժխնդրութեան եւ ազատութեան կրակն իրենց սրտերում: Մաշտոցը, սակայն, չբաւականացաւ լոկ դրանով. նա ձգտեց ստեղծել իր Երից մանկանց երգերը»¹¹:

Իր այդ երգերում Մաշտոցն էլ դիմելով Տիրոջը, աղաչել է.

... Փրկեա՛ եւ ըզմեզ, մարդասէր Տէ՛ր...¹²
 Ըստ ողորմութեան Բուն կեցո՛ւ զմեզ, Փրկի՛ չ...
 ...եւ փրկեա՛ զապաւինեալքս Բեզ...

... Մի՛ մատներ ըզմեզ ի սպառ...
 Վասն ուխտի Բո առ հարսըն,
 փրկեա՛ զմեզ ի հրոյն
 եւ ի բորբոքեալ բոցոյն ապրեցո՛ւ զմեզ...

Այս դիմումները կարելի է ընկալել թէ՛ իբրեւ մեղաւոր մարդու, հաւատացեալի աղերսներ, որպէսզի Աստուած փրկի իրեն եւ իր հաւատակիցներին ահեղ դատաստանից, եւ թէ՛ իբրեւ հայ մարդու աղաչանք, որպէսզի Տէրը փրկի իր հայրենակիցներին երկրի բռնակալներից ու նեղիչներից: Երգերից երկուսի մէջ ասուած է հետեւեալը, որը կարելի է ընկալել իբրեւ հայութեան ծանր քաղաքական-տնտեսական վիճակի արձանագրում.

... Նուադեցաք մեք յամենայնի...

Քանզի նուադեցաք մեք, քան զամենայն հեթանոսըս...

Իսկ ստորեւ բերուող տողերը նեղիչներից ժողովրդի փրկութեան համար Տիրոջն ուղղուած որոշակի աղերսներ են.

... օգնեա՛ մեզ ի նեղութեան մերում...

... փրկեա՛ զմեզ ի նեղչաց մերոց...

Ի նեղչաց մերոց փրկեա՛ զմեզ
եւ մի՛ ի սպառ մատմեր,
զի զինք արեան Քո եմք...

... եւ մի՛ ցրեր զուխտըս Քո:

Մաշտոցեան Հարցներն, ուրեմն, խիստ արտայայտուած կրօնական բովանդակութիւնից զատ, ունեն նաեւ ազգային-հայրենասիրական բովանդակութիւն, որն առաւելապէս արտայայտուել է ենթախորքում, երբեմն էլ դուրս եկել խօսքի մակերես:

Նշենք նաեւ, որ Երից Մանկանց նուիրուած Հարցներում պատկերուած բաբելոնեան հուրը, որ աստուածաշնչեան զրոյցի մէջ իրական այրող կրակ է, ձեռք է բերել փոխաբերական նշանակութիւն՝ մերթ իրեւ մարդու հոգին այրող մեղք, դժոխային կրակ, մերթ իբրեւ ժողովրդին խանձող նեղիչների պատուհաս: Փոխաբերական իմաստ են ստացել նաեւ երեք մանուկները, որոնք յաճախ մարմնաւորում են Տիրոջն ապաւինող մարդկութեանը, մերթ էլ՝ ողջակիզուող բայց եւ երկնային փրկութիւնն ակնկալող հայութեանը:

Յատկանշական է նաեւ, որ մաշտոցեան Հարցներում եւ Գործքերում գտնում ենք աստուածաշնչեան զրոյցից հետեւեալ շեղումը եւս: Զրոյցում երեք մանուկներին սատարելու համար Աստուած առաքում է իր հրեշտակին: Մինչդեռ մաշտոցեան մի շարք երգերում հրեշտակին երբեմն փոխարինում է ինքը՝ Հայր Աստուած կամ աւելի յաճախ՝ Քրիստոսը, որն առաքւում կամ իջնում է երկնքից եւ փրկում երեք մանուկներին, փոխաբերաբար՝ մարդկութեանը: Այսինքն՝ հայ օրհներգուն շեշտել ու կարեւորել է Յիսուսի փրկչական առաքելութիւնը:

Այսպիսով, մաշտոցեան Հարցն եւ Գործք երգերը աստուածաշնչեան զրոյցի սոսկական յարասութիւն չեն, այլ բանաստեղծական մշա-

կումներ, որ արտայայտում են ժամանակի հայ մարդու կրօնական յոյզերը, գաղափարներն ու հայրենասիրական-ազատասիրական իղձերը: Եւ դա արուած է երգ-բանաստեղծութեան ազգային ինքնատիպ ձեւի մէջ, ինչը դարձեալ մատնանշել է Մնացականեանը: Ինչպէս նկատել է նա, «Աստուածաշնչում Երից մանկանց օրհներգութիւնը մի ընդարձակ, միապաղաղ բանաստեղծութիւն է՝ նոյնական կրկնակներով. մինչ Մաշտոցի մօտ ամեն երգ բաղկացած է վեց տնից եւ կիսուած է երկու մասի (նկատի ունի Յական տներից բաղկացած միացեալ Հարցները եւ Գործքերը - Հ.Բ.): Այնուհետեւ, եթէ Աստուածաշնչում նշուած երգը ծայրից-ծայր հիստուած է միալար եղանակով եւ, հիմնականում, երկու կրկնակի օգնութեամբ (որոնք կազմում են երգի ողջ կէտը), ապա Մաշտոցի մօտ ամեն փոքրիկ երգ ունի իր ինքնուրոյն կառուցուածքը, իր կրկնակները, որով եւ նրանք աւելի թարմ ու աւելի բովանդակալից են, մանաւանդ, երբ նկատի ենք առնում բանաստեղծի հայրենասիրական բաղձանքները»¹³:

Եթէ այս ամէնին աւելացնենք նաեւ այն, որ յաճախ ուրիշի ուղղակի խօսքեր պարունակող այդ աշխոյժ ու կառուցիկ պատմողական-վիպական բանաստեղծութիւնները նաեւ երգուել են հայ անզուգական հոգեւոր եղանակներով, ապա դժուար չի լինի պատկերացնել այն խոր ազդեցութիւնը, որ ունեցել են դրանք ինչպէս ժամանակակիցների ու յետնորդների կրօնական եւ հայրենասիրական զգացումների, այնպէս էլ յետագայ հայ բանաստեղծութեան, մասնաւորապէս շարականագրութեան վրայ...:

Մաշտոցեան Ողորմեանները կազմում են 46 միաւոր: Այս երգերը կցորդուել են Մ սաղմոսին («Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ, ըստ մեծի ողորմութեան քում»): Ինչպէս Հարցներում եւ Գործքերում, այնպէս էլ Ողորմեաններում առկայ են աստուածաշնչեան համապատասխան բնագրերի որոշ, գրեթէ բառացի կրկնութիւններ: Սակայն, ինչպէս նախորդ երգերը, մաշտոցեան Ողորմեանները եւս նշուած բնագրերի յարասութիւններ չեն, այլ ինքնատիպ գողտրիկ բանաստեղծութիւններ, ուր յիշեալ սաղմոսի ապաշխարական ոգին արտայայտուած է հայ բանաստեղծի անհատական յոյզերով ու խոհերով: Հետեւաբար միանգամայն ճիշտ է նկատել Յակոբեանը, որ մաշտոցեան Ողորմեանները «վերջին հաշուով, սրտաբուխ, անկեղծ, հոգեյոյզ երգեր են, որտեղ առաջին անգամ երեւում է անհատն իր ներքին ապրումներով ու խնդրուածք-

մերով»¹⁴: Աւելի վաղ, Արեղեանն էլ նշել է, որ այդ կարգի երգերը «սրտայոյզ ողբեր են եւ ամէնից գեղեցիկներն են»¹⁵:

Մաշտոցեան Ողորմեաներին առաւել բնորոշ է անձնական-քնարական հնչերանգը, առանց որոշակի սիւժէի: Այսինքն՝ դրանք բացառապէս պատկանում են հայ օրհներգութեան աղօթքային (ստատիկ) ենթատեսակին, հիմնականում ապաշխարական-աղերսական բովանդակութեամբ:

Ահա օրհներգութեան աստեղծի անձնական խնդրուածքներից մէկը.

Ի նենգատր շըրթանց փըրկեա՛ զիս Տէ՛ր
եւ յարենէ ապրեցո՛ւ,
եւ ողորմեա՛:

Ողորմեաներն էլ երբեմն ձայնակցելով Հարցներին, արտայայտում են որոշ ազատասիրական տրամադրութիւններ.

Տո՛ւր մեզ, Տէ՛ր, զխաղաղութիւն
եւ փըրկեա՛ ի նեղաց մերոց...:

Մաշտոցեան Ողորմեաները ձայնակցում են միմեանց թէ՛ ապաշխարական ոգով եւ թէ՛ համանման կառուցուածքով, մակդիրներով, համեմատութիւններով ու փոխաբերութիւններով: Այս երգերն ամբողջութեամբ վերցրած կարելի է համարել Գրիգոր Նարեկացու Մատեան Ողբերգութեանի «նախատիպը» եւ գլխաւոր ներշնչարաններից մէկը: Այստեղ էլ զուգադրուած են Աստուած եւ մարդը: Եթէ Աստուած բազում ողորմ է, ամենակալ, բազմագութ, մարդասէր, բարերար, փրկիչ, ապրեցուցիչ, քաւիչ յանցանաց, յոյս ապաշխարողաց, ապա մարդը մոլորեալ է, մեղուցեալ, բազմամեղ, ամենամեղ...:

Այս ընդհանրական բնութագրումներից զատ երգաչարքում կան նաեւ թէ՛ Աստուածաշնչից եկող եւ թէ՛ ինքնահնար փոխաբերական մակդիրներ ու համեմատութիւններ, որոնք երգերը դարձնում են առաւել պատկերաւոր ու ազդեցիկ:

Աստուած հոգեւոր լոյսի կրողն է, ուստի եւ հանդէս է գալիս իբրեւ «Արեգակն արդարութեան». մի փոխաբերութիւն, որ տարածուել է հայ միջնադարեան քերթութեան մէջ, դարձել լուսերգութեան հիմքերից մէկը: Դիմելով Արդարութեան արեգակին, օրհներգի հեղինակը հայցում է.

... ծագեա՛ ի հոգիս մեր ըզլոյս ճըշմարտութեան...

Աստուած հանդէս է բերուած նաեւ իբրեւ «Թագաւոր խաղաղութեան», ահեղ կամ արդար Դատաւոր, յաճախ նաեւ իբրեւ հոգիների Բժիշկ: Վերջինիս զուգադրում է մեղքերի հիւանդութեամբ տառապող կամ յանցանքներից ու չարի, բանասրկուի նետերից վիրաւորուած մարդը: Ուստի եւ դիմելով «Իսկանդար Բժիշկ» եւ «աղբիւր բժշկութեան» Աստծուն, բանաստեղծը հայցում է.

... բրժըշկեա՛ եւ զիմ գիւանդութիւնս...

... բրժըշկեա՛ զհոգւոյ իմոյ գիւանդութիւնս...

Հա՛յր բարեգութ, բրժըշկեա՛ զվիրաւորեալս...

Մաշտոցեան Ողորմեաններում յաճախադէպ է նաեւ Աստծոյ, որպէս բանաւոր հօտի Հովիւի, եւ մարդու, որպէս մոլորեալ ոչխարի, փոխաբերութիւնը.

... որ Հովիւդ ես բանաւոր հօտի,
խընդրեա՛ եւ զիս՝ ըզմոլորեալս...

... որ խընդրողդ ես մոլորեալ ոչխարիս:

Մոլորեցայ ես, որպէս գոչխար կորուսեալ.

... խընդրող գերելոց, խընդրեա՛ զիս՝ ըզմոլորեալս...
Ոչխար եմ բանաւոր հօտի Քո
եւ առ Քեզ ապաւինեմ, Հովի՛ւ բարի,
խընդրեա՛ զիս՝ ըզմոլորեալս...

Ողորմեաններում աւելի մեծ տեսակարար կշիռ ունեն ծովի ու նաւի փոխաբերական պատկերներին առնչուող մակդիրներն ու համեմատութիւնները: Մեղքերը ներկայացւում են իբրեւ անօրէնութեան կամ թշնամու յարուցած հողմերից ալեկոծուող ծով, որտեղ լողորդի կամ նաւի նման տարուբերում է մարդը. որի մեղքերը ծովի աւազի պէս բազում են ու «յոյժ ծանր»: Մերձ է մեղքերով ծանրաբեռնուած լողորդի կամ նաւի խորտակումը, բայց նա ապաւինում է փրկարար «քարի Նաւապետ»ին, որ Աստծոյ մէկ ալ փոխաբերութիւնն է.

Ալեկոծիմ հողմով անօրէնութեան իմոյ...
Ի խորըս մեղաց ծովու տարաբերեալ՝ ծրփիմ.
Նաւապետ բարի, փրկեա՛ զիս:

Մերձ եմ յընկրդմիլ, օգնեա՛ ինձ, Նաւապե՛տ բարի,
քանզի ծանրացան ի վերայ իմ բեռինքք մեղաց:
Աստուա՛ծ, յօգնել ինձ փութա՛,
քանզի խորք չարեաց ընկրդմեն գիս յանդունդս.
այլ Դու, Նաւապե՛տ, լե՛ր եւ ի՛նձ ձեռնոտու:
Փըրկեա՛ ի վըտանգէ ըզնաւաբեկս ի յալեաց ծովէ...

Ալիք յանցանաց գիս ալեկոծեն...

Ի ծովու մեղաց ալեկոծեալ եմ
Եւ առ Քեզ աղաղակեմ, Նաւապե՛տ բարի,
փըրկեա՛ գիս ի վըտանգէս...

Այս կարգի պատկերներում կան իսկապէս բանաստեղծական ընտիր գոհարներ: Այդպիսին են յատկապէս հետեւեալ տողերը.

Ծով կենցաղոյս համապազ գիս ալեկոծէ:

Մըրըրկեալ ալիք թըշնամին ինձ յարուցանէ:

Նաւապե՛տ բարի, լե՛ր անձին իմոյ ապաւեն:

Կամ՝

Ծով մեղաց իմոց գիս ալեկոծէ. որ եւ Նաւապետ բարի,
շնորհեա՛ ինձ նաւահանգիստ, Հա՛յր ամենակալ:

Խորք պատրանաց գիս կորուսանեն. այլ դու, Նաւապե՛տ բարի,
շնորհեա՛ ինձ նաւահանգիստ, Հա՛յր ամենակալ:

Ծովի եւ նաւի նմանօրինակ փոխաբերական պատկերները, որ հայ օրհներգութեան մէջ, ըստ էութեան, սկիզբ են առնում մաշտոցեան երգերից, նոյնպէս լայնօրէն տարածուել են հայ միջնադարեան բանաստեղծութեան մէջ եւ իրենց լաւագոյն դրսեւորումը գտել Նարեկացու Մատենանում:

Ողորմեաններում, ըստ հարկի, կատարուած են նաեւ բազմաթիւ համեմատութիւններ քնարական հերոսի եւ Նոր Կտակարանի մի շարք գործող անձանց միջեւ: Այդ երգերը, համադրուելով Հարցներին ու Գործքերին (որոնց յաջորդում են անմիջաբար), դրանց վիպականութիւնն ընդմիջում են ողբական-քնարական շնչով...:

Մաշտոցեան Տէր Յերկնիցները եւս կազմում են 46 միաւոր: Այդ երգերը կցորդուել են ՃԽԸ՝ սաղմոսին («Օրհնեցէ՛ք զՏէր յերկնից, օրհնեցէ՛ք զնա ի բարձանց»): Այս երգերը եւս իրենց կառուցուածքով, տրամադրութեամբ ու բանարուեստով կազմում են մի առանձին տեսակ, որը հիմնականում թրծուած է օրհնաբանական-փառաբանական շնչով: Այսինքն՝ այս անգամ էլ գործ ունենք օրհներգութեան աղօթքային տարատեսակի հետ:

Տէր Յերկնիցներում պաշտողը (հեղինակը) կա՛մ ուղղակիօրէն ինքն է կատարում գովերգութիւնը կա՛մ էլ այլոց է կոչ անում գովերգելու Աստծուն: Այստեղ մեծ թիւ են կազմում յատկապէս Սուրբ Երրորդութեանը բարեբանող երգերը, որտեղ Հայր Աստուած, Որդի Աստուած եւ Սուրբ Հոգին եռատող տներում գովերգում են առանձին-առանձին եւ միասնութեան մէջ: Բերենք բազում օրինակներից մէկը.

Օրհնենք ըգՔեգ, Հա՛յր սուրբ,
ի յամենայն ժամ:

Գովենք ըգՔեգ, Որդի՛դ Միածին,
ի յամենայն ժամ:

Բարեբանենք ըգՔեգ, Հոգի՛դ նըշմարիտ,
ի յամենայն ժամ:

Բնականաբար, պաշտողն իր հայեացքը աւելի շատ սեւեռում է Քրիստոսին, մարդկութեան Փրկչին եւ Ահեղ Դատաստանը վարողին, որին փառաբանում է արդէն կայունացած մակդիրներով:

Որոշ Տէր Յերկնիցների մէջ, ինչպէս նկատել է Յակոբեանը, «ապաշխարական տարրը ուժեղանալով՝ դուրս է մղել փառաբանական ոգին եւ դարձել խնդրանքների, զղջման եւ աղաչանքների բանաստեղծութիւն, որտեղ արդէն երեւում է շարականի հեղինակն իր ներքին, խռովայոյզ ապրումներով, ողբով ու յոյսով»¹⁶: Ի հաստատումն բերենք հետեւեալ տողերը.

Ի համբառնալ իմուն առ Քեգ զաչս իմ,
օգնեա՛ ինձ, Տէ՛ր:

Յորժամ զայցես բազում հրեշտակօք, Տէ՛ր,
ի դատել զերկիր,

Յայնժամ շարժին զօրութիւնք երկնից, Տէ՛ր,
ի յաիւ Բուսմէ:
Եւ յայնմ ատուր լէ՛ր իմ օգնական,
Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ:

Ահա վաղ առաւօտեան աղօթքի ելած բանաստեղծի անկեղծ ու անմիջական խօսքը:

Ընդ առաւօտըս կանխեցից յանդիման լինել Բեզ,
Թագաւո՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ:

Ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում, Տէ՛ր,
Թագաւո՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ:

Ես ըզԲեզ աղաչեմ, Տէ՛ր, նայեա՛ յաղօթս իմ,
Թագաւո՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ:

Սակայն, ընդհանուր առմամբ, Տէր Յերկնից երգերն, ինչպէս նշեցինք, ունեն օրհնաբանական-փառաբանական բնոյթ եւ ներհիւսուելով վիպական Հարցներին ու Գործքերին, ողբական-քնարական Ողորմեաներին (որոնց յաջորդում են անմիջաբար), ընդհանուր խօսքին հաղորդում են ներբողական-պաթետիկ հնչերանգ:

Քննուած տարաբնոյթ, բայց բովանդակութեամբ ու տրամադրութեամբ իրար շահեկանօրէն լրացնող երեք երգատեսակներից զատ Մաշտոցն ստեղծել է նաեւ համեմատաբար փոքր թիւ կազմող Մանկունքներ եւ Համբարձիւններ: Դրանք նոյնպէս աղօթքային ենթատեսակներ են: Նման երգերը մաշտոցեան օրհներգերի ութ շարքերում կատարում են մի տեսակ ամփոփիչ, եզրափակիչ դեր:

Մանկունքները կցորդուել են ՃԺԲ. սաղմոսին («Օրհնեցէ՛ք, մանկո՛ւնք, զՏէր եւ օրհնեցէ՛ք զանուն Տեառն»), իսկ Համբարձիւնները՝ ՃԻ. սաղմոսին («Համբարձի գաչս իմ ի լերինս, ուստի եկեցցէ ինձ օգնութիւն»): Այս անգամ էլ, ինչպէս նախորդ երգատեսակների պարագայում, մաշտոցեան երգերն աւելի հնչեղ ու ազդեցիկ են իրենց աստուածաշնչեան նախօրինակներից:

Մաշտոցեան 10 Մանկունքները հիմնականում օրհնաբանութիւններ են՝ զուգակցուած հեղինակի անձնական կամ անանձնական աղերսանքներին: Այսինքն՝ համանման են Տէր Յերկնիցներին, որոնց եւ յաջորդում են Շարականոցում: Ահա մի օրինակ, որը մէկ այլ գեղեցիկ «առա-

ԼՕՄՈՒԼ աղօթք» է՝ ողողուած այգաբացի լոյսով, որ մարմնաւորում է աստուածային լուսակերպութիւնը:

Լո՛յս փառաց, Բա՛նդ Աստուած,
որ ծագեցեր ի մեզ ըզլոյս գիտութեան,
կարդամք առ Քեզ, Տէ՛ր,
առաւօտու աղօթք մեր հաճոյացին Քեզ:

Յանմարմնոց վերօրհնեալ, ի մարդկանէ երկրրպագեալ
Բնակեա՛լդ ի լոյս անմատոյց,
կարդամք առ Քեզ, Տէ՛ր,
առաւօտու աղօթք մեր հաճոյացին Քեզ:

Երեքսրբեան Տէրութի՛ւն, միասնական Աստուածութի՛ւն,
Բնակեա՛լդ ի լոյս անմատոյց,
կարդամք առ Քեզ, Տէ՛ր,
առաւօտու աղօթք մեր հաճոյացին Քեզ:

Մաշտոցեան Մանկունքները հայ լուսերգութեան առաջին նմուշներն են: Այստեղ էլ Աստուած բնութագրուած է իբրեւ «Արեգակն արդարութեան», որը «Ծագմամբ լուսոյ զարդարեաց զազգըս մարդկան»: Եւ լուսոյ երգիչը կոչ է անում:

Որդի՛ք Լուսոյ, տո՛ւք ըզփառքս Հօրքն Լուսոյ...

Մանկունքներում էլ երբեմն փառաբանութիւնը տեղի է տալիս պաշտողի անձնական յոյզերին ու ապրումներին: Շատ ազդեցիկ է յատկապէս հետեւեալ երգը, որ նոյնպէս մեր քերթութեան առաջին գոհարներից է:

Յո՛յս իմ, ի մանկութեմէ իմմէ,
մի՛ թողուր զիս, Տէ՛ր Աստուած իմ:

Յո՛յս իմ, ի ժամանակի ծերութեան իմոյ,
մի՛ թողուր զիս, Տէ՛ր Աստուած իմ:

Յո՛յս իմ, ի միսսանգամ գալըստեան Քո,
մի՛ անտես առնէր զիս, Տէ՛ր Աստուած իմ:

Մաշտոցեան 11 Համբարձիւնները, որ յաջորդում են Մանկունքներին, ի տարբերութիւն վերջիններիս, հիմնականում աղերսական բնոյթի զգացմունքային երգեր են: Ահա հեղինակի՝ Տիրոջն ուղղուած մի աղեր-

ասնք, որտեղ դարձեալ կրօնական բովանդակութեան ենթաշերտում կարելի է լսել նաեւ տառապող հայութեան հոգու ճիւղ:

Տո՛ւր մեզ, Տէ՛ր, զօգնութիւն ի նեղութեան,
զի օրհնեսցուք համապազ զահաւոր անուն Քո սուրբ:

Պահեա՛, զմեզ, Տէ՛ր, յամենայն փորձութենէ
յաներեւոյթ թըշնամոյն եւ ի գաղտնի նետից նորա:

Դու՝ Յոյս մեր եւ Ապաւեն յամենայն ժամանակի,
որ օրհնիս համապազ ի Քոյոց արարածոց:

Նման հայցումներ կան նաեւ այլ Համբարձիներում, որոնք ասես արձագանգում են Հարցների աղերսանքներին եւ դրանով էլ իւրովի եզրափակում մաշտոցեան օրհներգերի բուն ասելիքը: Այդ օրհներգերը, յիրաւի, ի խորոց սրտի ասուած թէ՛ առաւօտեան եւ թէ՛ երեկոյեան աղօթքներ են առ Աստուած, որոնք միտուած են ինչպէս առհասարակ մարդկութեան, այնպէս էլ՝ մասնաւորապէս հայութեան փրկութեանը:

Մաշտոցեան երգերի ներշնչարանն, ինչ խօսք, առաջին հերթին Աստուածաշուէնն է՝ սաղմոսները, օրհնութիւններն ու աղօթքները: Ինչպէս նկատել է Մնացականեանը, այս կամ այն չափով ազդեցութեան աղբիւրներ են հանդիսացել նաեւ հայկական մեհենական երգերն ու աղօթքները, հին գուսանական եւ ժողովրդական, ինչպէս նաեւ առաւել հին ժամանակների հեթանոսական բանաստեղծութիւնը¹⁷:

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻԵԱՆ ՕՐՀՆԵՐԳԵՐԸ

Նշեցինք, որ Մեսրոպ Մաշտոցը եւ Սահակ Պարթեւը միաժամանակ են ստեղծել հայերէն առաջին ինքնուրոյն օրհներգերը: Սահակ Պարթեւը գրել է Ղազարի յարութեանը, Ծաղկազարդին եւ Աւագ (Մեծի) Շաբաթի նուիրուած կարգերը: Ըստ այսմ մեզ յայտնի են նրա հեղինակած 59 կանոնական եւ պարականոն երգեր:

Փաստօրէն, Մեսրոպ Մաշտոցը եւ Սահակ Պարթեւը իրազործել են մի միասնական ծրագիր՝ ստեղծել երգեր՝ նուիրուած Յարութեան համար սահմանուած Մեծ Պահքի քառասնօրեայ շրջանին եւ դրան անմիջապէս յաջորդող Ղազարի յարութեանը, Ծաղկազարդին եւ Աւագ Շաբաթի օրերին, որոնք նոյնպէս պահքի օրեր են:

Ղազարի յարութիւնը, ի պատիւ Յիսուսի հրաշագործութեան, մեր եկեղեցին նշում է Մեծ Պահքի վերջին շաբաթ օրը, որպէս Տէրունական

տօն: Այդ եւ միւս կարեւոր եկեղեցական տօները հաստատել է ինքը՝ Սահակ Պարթեւը, որպէս հայոց հայրապետ եւ հայ եկեղեցու ինքնութեան ու բարգաւաճման նախանձախնդիր գործիչ: Նրա հաստատած արարողակարգով ու տօնացոյցով են նշուել տօները, որոնցից մի քանիսի համար նա ինքը հարկ է համարել յօրինել հոգեւոր երգեր: Պատահական չէ, որ Սահակ Պարթեւը հեղինակել է այն օրհներգերը, որոնք թեմատիկայով առնչուում են Նոր Կտակարանին, որի հիմնական թարգմանիչն է եղել նա:

Ըստ Արեղեանի, Սահակ Պարթեւն ունեցել է «մի պարզ նպատակ... երգի միջոցով սովորեցնել Աւետարանի պատմութիւնը»¹⁸: Կարծում ենք, մեծ գիտնականը չափից աւելի «պարզեցրել է» օրհներգուի նպատակը: Վերջինս ոչ միայն ձգտել է սովորեցնել աւետարանական պատմութիւնները, այլեւ, ինչպէս կը տեսնենք՝ վեր հանել դրանց գաղափարաբանութիւնը, արտայայտել իր վերաբերմունքը՝ աղերսանքների ու յոյզերի մջոցով:

Ղազարի յարութեան պատմութիւնը շարադրուած է Յովհաննու Աւետարանում (Գլ. ԺԱ.): Այս պատումի հիման վրայ Սահակ Պարթեւն իր իսկ կատարած թարգմանութեան լեզուով ու ոճով ստեղծել է ինը երգերից բաղկացած մի կարգ, որը աւետարանական պատմութեան մի իւրօրինակ բանաստեղծական մշակում է:

Կարգն սկսւում է երեք Օրհներգիւններով, որոնցից երկուսը երգւում են սոյն, միւսը՝ այլ ձայնեղանակով: Օրհներգիւնը նախապէս կցորդուել է «Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ» սկսուածքով մարգարէական տասը օրհներգիւններին, որոնք ընդգրկուել են հայկական Սաղմոսարանի մէջ: Շարականոցային կարգերը (կանոնները), ութ երգատեսակների (կամ դրանց մի մասի) առկայութեան պարագայում, սկսւում են Օրհներգիւններով: Այս երգատեսակը, ինչպէս գրում է Յակոբեանը, «միւս եօթ տեսակին գաղափար եւ ուղղութիւն տուող շարականն է, որին իրենց ձայնով եւ ոգով հետեւում են մնացածները»¹⁹: Այդպէս է նաեւ Ղազարի յարութեան կարգում, որտեղ Օրհներգիւնները ներկայացնում են հիմնական պատումը եւ արտայայտում այն գաղափարը, որ Յիսուսի հրաշագործութեամբ պարտւում են մահը եւ դժոխքը («Դողացաւ մահ, դժոխք պարտեցաւ», «սարսեցին դողալով կարապետք դժոխց»²⁰),

Ըստ շարականոցային կարգի, Օրհներգիւն երգատեսակին յաջորդում է Հարցնը: Այդպէս է նաեւ սոյն երգաշարքում: Հարցնին ծանօթացանք մաշտոցեան երգերը քննելիս: Այդ երգատեսակի նախնական

թեման հանդիսացող Երից Մանկանց պատմութիւնը Սահակ Պարթեւի խնդրոյ առարկայ կարգի Հարցնում տեղի է տուել այլ նիւթի՝ Ղազարի յարութեան պատմութեանը: Պահպանուել է միայն երգատեսակի նախնական կառուցուածքը (երեք տուն Հարցն եւ երեք տուն Գործք՝ որոշ կայուն դիմումներով եւ արտայայտութիւններով):

Հարցներին յաջորդում են Ողորմեա, Տէր Յերկնից, Մանկունք եւ Ճաշու երգերը: Ճաշու երգը նախապէս կցորդուել է տարբեր սաղմոսների (Հիմնականում՝ ՃԺԴ. եւ ՂԲ.) եւ երգուել է կէսօրուայ (ճաշու) ժամերգութեան ընթացքում: Բոլոր այս երգատեսակներն առկայ են Ղազարի յարութեան կարգում եւ արծարծում են նոյն նիւթն ու գաղափարը: «Աննդանութեանց բաշխող», «Աղբիւր կենաց» Յիսուսի միջոցով կեանքը յաղթում է Մահին...:

Այստեղ ուզում ենք նշել նաեւ մի ուշագրաւ հանգամանք: Թէ՛ Աւետարանում եւ թէ՛ Սահակ Պարթեւի երգերում Ղազարը հանդէս է գալիս որպէս Յիսուսի սիրելի: Դրա բուն պատճառն այն է, որ Յիսուսը Ղազարի մէջ տեսել է (կամ նախապատրաստել է) իր իսկ յարութեան նախօրինակը, Աստուածային Յարութեան նախանշանը: Այդ է ասուած առաջին օրհնութեան երկրորդ տան մէջ.

Այսօր գոլով ի Բեթանիա՝
զՔո աշխարհակեցոյց Սուրբ Յարութիւնդ
յառաջագոյն ծանուցեր՝
անապականաբար կոչմամբ գշորեքօրեայն ի թաղմանէ.
կենդանաբար՝ ր Քրիստոս, կեցո՛ւ ըզմեզ:

Ահա թէ ինչու է այդպէս կարեւորուել Ղազարի յարութիւնը, որը կատարուել է Աստուածորդու յարութիւնից մէկ շաբաթ առաջ եւ դարձել այդ ամենանշանակալից եկեղեցական տօնի այսպէս ասած՝ նախատօնակը:

Նշենք նաեւ մէկ այլ հանգամանք: Սահակ Պարթեւի ստեղծած այս կարգում, թերեւս աւելի, քան որեւէ այլ տեղ, Յիսուսը ներկայացուած է միաժամանակ թէ՛ իբրեւ կարեկից մարդ եւ թէ՛ իբրեւ մարդասէր Աստուած: Նա անտարբեր չի մնում Ղազարի քոյրերի՝ Մարիամի եւ Մարթայի արտասուքին եւ ինքն էլ «տնօրինաբար արտասուելով»՝ ողբակցում է նրանց.

Եւ որպէս մարդ՝ հարցանէր. «Ո՞ր եղիք ըզՂազարոս»:
Եւ որպէս զԱստուած՝ բարբառով յարուցանէ
ի մեռելոց ըզշորեքօրեան...

Աւելացնենք, որ այս եւ միւս կարգերում օրհներգուն փառաբանել է նաեւ Աստծոյ կենսատու էութիւնը, անուանելով նրան «Կենդանաբար», «Կենդանութեանց բաշխող», «Աղբիւր կենաց եւ անմահութեան» եւն.: Ինչպէս Մաշտոցը, Սահակ Պարթեւը եւս Աստծուն օրհներգել է նաեւ իբրեւ հոգեւոր լոյսի կրողի, համարել նրան «Աղբիւր լուսոյ եւ ճառագայթ», «անշիջանելի Լոյս», Հօր ծոցից ծագած Լոյս եւ Ճառագայթ, լոյսն իբրեւ թիկնոց կրող:

Ղազարի տօնին անմիջապէս յաջորդում է Ծաղկազարդը (Ծաղազարդար), որը նշանաւորում է Յիսուսի մուտքը Երուսաղէմ: Ըստ Աւետարանի (Յովհաննու ԺԲ.), Ժողովուրդը լսելով Ղազարի յարութեան հրաշքը, արմաւենու ճիւղեր առած՝ ընդառաջ է ելնում Յիսուսին՝ աղաղակելով. «Ովսանմա՛, օրհնեալ որ գասդ յանուն Տեառն, Թագաւո՛րդ Իսրայէլի»:

Ծաղկազարդը տօնուել եւ տօնուում է նաեւ Համբարձմանը յաջորդող Կիրակի օրը, ի յիշատակ Յիսուսի՝ Երուսաղէմ երկրորդ մուտքի: Այդ երկու նոյնական տօների համար Սահակ Պարթեւը ստեղծել է երկու կարգ՝²¹: Դրանք նոյն նիւթի բանաստեղծական մշակումներ են եւ արծարծում են նոյն գաղափարը՝ Յիսուսի մարդեղացման, աստուածային էութեան եւ փրկչական առաքելութեան հաստատումը:

Առաջին կարգն սկսւում է երկու նոյնաձայն Օրհնութեամբ, որոնք ընդհանուր նիւթի եւ գաղափարի կրողներն են: Նրանց յաջորդող Հարցնը պարականոն է դարձել: Այստեղ երեք մանուկների նիւթի համանմանութեամբ ներկայացուած է նոր՝ ծաղկազարդեան իրողութիւնը:

Ցնծագին տրամադրութեամբ են համակուած Ծաղկազարդին ձօնուած բոլոր երգերը, այդ թւում նաեւ՝ երկրորդ կարգի:

Ինչպէս նկատել է Յակոբեանը, Ծաղկազարդին նուիրուած բոլոր երգերը գրուած են «պարզ ու մատչելի լեզուով, խոր յուզականութեամբ, որտեղ պարզ երեսուն է Դաւթի սաղմոսների թողած ազդեցութիւնը»²²:

Ծաղկազարդին յաջորդում է Մեծ կամ Աւագ Շաբաթը, Յիսուսի Յարութեանը նախորդող վեց օրերը՝ Երկուշաբթիից մինչեւ Շաբաթ օրը: Այդ օրերին են կատարուել Յիսուսի մատնութիւնը, դատապարտումը, խաչելութիւնը, մահը եւ թաղումը:

Սահակ Պարթեւը հաստատել ու կարգաւորել է նաեւ այդ օրերի եկեղեցական ծիսակարգը եւ իւրաքանչիւր օրուայ համար ստեղծել համապատասխան բովանդակութեամբ ու տրամադրութեամբ հրգերի կարգեր: Դրանք, ըստ էութեան, ամբողջութեամբ վերցրած, ներկայացնում են վեց դրուագներից բաղկացած մի գեղեցիկ օրհներգութիւն:

Ասենք, որ այս կարգերից, մեր կարծիքով, պակասում են Սահակ Պարթեւի հեղինակած որոշ հրգեր, որոնք նախորդ կարգերի մի քանի հրգերի նման պարականոն են դարձել, սակայն չեն պահպանուել ձեռագրերում: Բացառուած չէ, որ նախորդ կարգերում էլ եղել են հրգեր, որոնք նոյնպէս պարականոն դառնալով՝ չեն հասել մեզ:

Այսօրուայ վիճակով Աւագ Շաբաթի առաջին կարգն սկսւում է մէկ Օրհնութեամբ: Այդ երգը կրում է վեց կարգերի հիմնական դադափաւրը, այն է՝ Յիսուսը իր գալստեամբ եւ մահուամբ փրկեց մարդկութիւնը նախահայր Ադամի մեղքից եւ բացեց անմահութեան դուռը:

Ինչպէս նկատել է Հայր Գաբրիէլ Աւետիքեանը, «Ի մեծի երկուշաբաթին յիշատակ առնենք արարչագործութեան աշխարհի, իբրեւ հիման երկրորդ արարչութեան», որ Քրիստոսի կատարեցաւ... Ի սոյն խորհուրդ հային բանք շարականիս»²³: Քանի որ Ադամը մեղքի պատճառով մերկացաւ եւ «զգեցաւ զթգննոյն ծածկոյթ փոխանակ անճառ լուսոյն», ուստի եւ երկրորդ արարչագործութիւնը կատարող Քրիստոսը չորացրեց հին մարդու խորհրդանիշ անպտուղ թզենին (Մատթէոս ԻԱ., 18-22):

Այստեղ էլ, իր ժողովրդի փրկութեանը նախանձախնդիր հայ օրհներգուն մարդու բնութիւնը նորոգող Աստուածորդուն աղերսում է.

Եւ ըզմե՛զ ի հնացեալ մեղաց
նորոգեա՛ ի կեանս անմահ:

Համանման աղերսներ են արւում նաեւ այս եւ միւս կարգերում.

Շնորհեա՛ եւ մեզ, Տէ՛ր, կալ ի յաջմէ Քումմէ:

... Եւ մեր աղաչենք,
զի դասեսցես ընդ սուրբնս Քո:
... արժանի՛ արա ըզմեզ ըմպել
զբաժակ պատուիրանի կենաց Քոց, Տէ՛ր,
որով կացցուք յաջմէ Քումմէ՛
ի հանդերձեալ Քում գալլստեան:

Շնորհեա՛ մեզ...

զԱրքայութիւն Քո, Քրիստո՛ս:

Աւագ Երեքշաբթիի կարգը խարսխուած է Զիթենեաց Լեռան ստորոտին քարոզող Քրիստոսի կանխասացութիւնների ու առակների վրայ (Մատթէոս ԻԴ.-ԻԵ.): Ակնարկելով տասը կոյսերի առակը՝ օրհներգուն աղաչում է.

Շնորհեա՛ մեզ, Տէ՛ր, արթնութիւն

ընդ իմաստուն կուսանացըն,

եւ զհոգւոց մերոց լապտերըս պայծառացո՛ւ:

Աւագ Զորեքշաբթիի կարգի հիմնական թեման Յուդայի մատնութիւնն է եւ քահանաների դաւադրութիւնը: Անհրաժեշտ է նշել, որ հեղինակը կարեւորել է այն, որ Յիսուսն ինքն է կամովին ենթարկւում այդ մահաբեր մատնութեանը: Ինչպէս ասուած է կարգի Ողորմեայում.

ԸզՔեզ, որ Թագաւորը թագաւորաց, ի ծառայէ դատապարտեալ, զի ըզմեզ փրկեացես ի յանիծիցն Ադամայ:

Այս միտքը հեղինակն առաւել յստակօրէն ու բանաստեղծական գեղեցիկ ձեւի մէջ արտայայտել է յաջորդ՝ Տէր Յերկնից երգում, որը բերում ենք ամբողջութեամբ.

Այսօր եկեալ կամաւ Փրկիչն՝

առ ի մատնիլ յանօրէն ժողովրդէն,

վասըն փրկութեան հեթանոսաց:

Այսօր մատնի Բանն ի բանաւոր հօտէ

եւ յառաջոց դատապարտի յանօրինաց ժողովրդէն,

վասըն փրկութեան հեթանոսաց:

Այսօր հողն ըզՏէրըն դատապարտէ,

եւ արծաթոյ վաճառի Արարիչն արարածոց,

վասըն փրկութեան հեթանոսաց:

Աւագ Հինգշաբթիի կարգի հիմնական թեման Յիսուսի խորհրդաւոր ընթրիքն է, երբ նա խոնարհութեան աննախադէպ օրինակ ցոյց տալով, լուանում է աշակերտների ոտքերը (Յովհաննու ԺԳ.) եւ խորհրդաբար բաշխում նրանց իր մարմինն ու արիւնը (Մատթէոսի ԻԶ.):

Աւետարանական այս պատումները բանաստեղծօրէն վերաշարադրելով, Սահակ Պարթեւը, դարձեալ ըստ առիթի, հեղում է իր աղերսանքները թէ՛ իր անձի եւ թէ՛ իր համայնքի համար:

Մաքրեա՛ ի մէնջ ըզմէզ խաւարին խորհրդոյ
եւ լուսաւորեա՛ զմեզ:

Եւ զի՛ս լուա, Քրիստո՛ս, ի մեղաց իմոց...
զի եւ մեք հաղորդեսցուք սրբութեամբ
ընդ սրբոց Քոց առաքելոցն այսօր ի սուրբ Վերնատունըն...

Բըժըշկեա՛ զհոգւոյ իմոյ զհիւանդութիւն:

Յաջորդ երկու կարգերի թեման է Յուդայի մատնութեամբ Յիսուսի կալանքը, չարչարանքները, մահը եւ թաղումը:

Օրհներգուն որքան փառաբանում ու պանծացնում է մարդկութեան փրկութեան համար ինքնակամ մահուան գնացող Յիսուսին, այնքան սուր ու անողորձ ձաղկում է մատնիչ Յուդային: Աւագ Ուրբաթի կարգի առաջին իսկ Օրհներգեան մէջ ասուած է.

Արծաթասիրութեամբ մոլեալ Յուդա
Զիւր ըզմեծ ըզՎարդապետն ընդ երեսուն արծաթոյ

հրէիցըն մատներ:

«Ընդ որում ես համբուրեցից, ասէ, ըզնա կալարո՛ւք».
Ո՛վ համբոյր նենգութեան, նըշան եւ առիթ մահու:

Մերկացաւ յինքենէ զաստուածային Սուրբ Հոգին
եւ ըզգեցաւ ըզՍատանայ, որպէս զհանդերձ արկաւ զիւրեաւ:

Այս վերջին կարգերի օրհներգերից շատեր կառուցուած են հակադրութիւնների վրայ: Յիսուսը, որից դողում են երկնային հրեշտակները, խաչ է հանւում եւ խոցւում գեղարդով: Նա, որ թագաւորների թագաւորն է, դատապարտւում է ծառայի կողմից: Նա, որ պարգեւատուն է բոլորի, այժմ պարգեւ է խնդրում Պիղատոսից: Նա, որ կենդանատուն է բոլորի, այժմ դրւում է գերեզման: Նա, որին օրհնում են երկնային զօրքերը, այժմ գերեզմանում փակուած հսկւում է զինուորների կողմից: Նա, որ լոյսն էր որպէս թիկնոց նետում իր վրայ, այժմ պատանքով է պատւում...:

Յիրաւի, հրաշալի եւ ահեղ է այն տեսարանը, որ ասես ականատեսի տպաւորութեամբ պատկերել է Սահակ Պարթեւը՝ ստեղծելով իր ամենայուզիչ օրհներգը, որը մեզ յիշեցնում է Քրիստոսի խաչելութիւնը պատկերող լաւագոյն կտաւները:

Ո՛վ ըսքանչելի եւ տեսիլ ահաւոր,
զԱրարիչն երկնի եւ երկրի այսօր տեսաք ի խաչի:

Տեսեալ ըզՏէրն ի խաչին՝ խաւարեցաւ արեգակըն,
եւ վարագոյր տաճարին ցելոյր վերուստ մինչ ի վայր:

Անարգաքար խաչեցաւ Տէրն ի մէջ յանօրինաց,
զի լըցցի զիրն, որ ասէ, թէ ընդ անօրէնս համարեցաւ:

Սա արդէն իսկ ազդեցիկ է իբրեւ զուտ բանաստեղծութիւն. բնականաբար աւելի ազդեցիկ է երգուելիս եւ է՛լ աւելի ազդեցիկ է համապատասխան արարողութեան միջնորդութեամբ: «Պէտք է երեւակայել, - գրում է Աբեղեանը, - մոմերը հանգցրած մութ եկեղեցին, լի արտասուող ժողովրդով, կէս զիշերային ժամին, որ հասկացուի, թէ ի՞նչ սարսուռ էր անցնում հաւատացեալ աղօթաւորի հոգով, երբ այս սրտաճմլիկ ազդու երգն էր հնչում»²⁴:

Սահակ Պարթեւի օրհներգերը մեծ մասամբ լինելով աւետարանական պատմութիւնների բանաստեղծական վերաշարադրանքներ, հիմնականում ունեն վիպական կամ պատմողական բնոյթ: Դրանով հանդերձ այդ երգերում առկայ են նաեւ փառաբանական, օրհնաբանական ոգին ու ջերմ յուզական շուռչը...

Սահակ Պարթեւը եւ Մեսրոպ Մաշտոցը իրենց օրհներգերը ստեղծել են ամենաուշը 420ականներին: Այդ ժամանակ հայ քրիստոնէական մշակոյթը, այդ թւում նաեւ երգ-երաժշտութիւնը, գտնւում էր իր խանձարուրդով: Դրանով է բացատրւում, բառի նախնական ու ամենագրական իմաստով, այն պրիմիտիւիզմը, որ բնորոշ է այդ երգերին: Գրեթէ անզարդ, պարզ ու անմիջական խօսք, որ վարակում է՝ լինելով հենց այդպիսին: Խօսքի նման պարզութիւնն, անշուշտ, բացատրւում է նաեւ լայն լսարանին ըստ ամենայնի հասկանալի լինելու հեղինակային մտահոգութեամբ:

Հայ առաջին օրհներգերը թէեւ ինչ-որ չափով դեռեւս լեզուաոճական կախուածութեան մէջ են աստուածաշնչեան բնագրերից, սակայն, ընդհանուր առմամբ, ինքնուրոյն բանաստեղծութիւններ են, ինչպէս

ինքնուրոյն են դրանց ձայնեղանակները: Յիրաւի, Մեսրոպ Մաշտոցը եւ Սահակ Պարթեւը միջնադարեան հայ առաջին երաժիշտ-բանաստեղծներն են, հայ անհատական երգ-երաժշտութեան կերտիչները:

Հաւատով, յոյսով, լոյսով, մարդասիրութեամբ ու հայրենասիրութեամբ տոգորուած նրանց երգերը այն խտացուած միջուկն են, որից պիտի ճառագէժր ու դարերի հոլովոյթում պիտի գնալով յորդանար համաշխարհային քնարերգութեան գանձարանում իր ուրոյն ու մնայուն տեղն ունեցող հայ միջնադարեան բանաստեղծութիւնը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Հենրիկ Բախինեան, «Հայ Օրհներգութեան Սկզբնաւորումը», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. ԻԸ, Պէյրութ, 2008, էջ 45-60:
- ² Շարական Հոգեւոր Երգոց, Կ. Պոլիս, 1853, էջ Ա:
- ³ Մանուկ Աբեղեան, «Ս. Գրքի Եւ Կանոնի Ազդեցութիւնը Շարականների Վրայ», *Արարատ*, 1912, թիւ 10-11, էջ 1006:
- ⁴ Ասատուր Մնացականեան, «Մեսրոպ Մաշտոցը Որպէս Բանաստեղծ», *Բանբեր Մատենադարանի*, թիւ 7, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ., 1964, էջ 127. նաեւ՝ Նիկողոս Թաւմիզեան, «Մեսրոպ Մաշտոցն Ու Հայոց Հոգեւոր Երգարուեստը», *Բանբեր Մատենադարանի*, թիւ 7, էջ 191:
- ⁵ Շարակնոցում դրանք ԻԸ, Լ, ԼԲ, ԼԳ, ԼԶ, ԼԹ, ԽԲ. երգաչարքերն են՝ էջ 133-142, 149-158, 163-180, 186-199, 212-222, 244-255: Մաշտոցեան երգաչարքերը Շարակնոցում ընդմիջարկում են Մեծ Պահլի շրջանին վերաբերող որոշ տօների առթիւ ստեղծուած երգերով կամ կանոններով:
- ⁶ Թաւմիզեան, էջ 195:
- ⁷ Մանուկ Աբեղեան, *Երկեր*, Հտր. Գ, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., 1968, էջ 545-548:
- ⁸ Մնացականեան, էջ 138:
- ⁹ Գրիգոր Յակոբեան, Շարականների Ժանրը Հայ Միջնադարեան Գրականութեան Մէջ (V-XV դդ.), Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., 1980, էջ 72:
- ¹⁰ Դանիէլ, Գ., 26, 32, 37-45:
- ¹¹ Մնացականեան, էջ 143-144:
- ¹² Մնացականեան, էջ 145:
- ¹³ Մաշտոցեան օրհներգերի մէջբերումները կատարուած են Շարակնոցի 1853ի Կ. Պոլսի հրատարակութիւնից (էջ 133-255):
- ¹⁴ Յակոբեան, էջ 78:
- ¹⁵ Աբեղեան, *Երկեր*, էջ 545:
- ¹⁶ Յակոբեան, էջ 77:
- ¹⁷ Մնացականեան, էջ 139:
- ¹⁸ Աբեղեան, *Երկեր*, էջ 548:
- ¹⁹ Յակոբեան, էջ 34:
- ²⁰ Սահակ Պարթեւի կանոնական օրհներգերի մէջբերումը եւս կատարուած է Շարակնոցի 1853ի Կ. Պոլսի հրատարակութիւնից (էջ 255-315):

²¹ Սահակ Վրդ. Ամատունի, Հին Եւ Նոր Պարականոն Կամ Անվաներ Շարականներ, Վաղարշապատ, Ելեքտրաշարժ Տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1911, էջ 87: ԺԲ. դարում Գրիգոր Փոքր Վկայասէրը ստեղծել է Երկրորդ Մաղկաղարդին նուիրուած նոր կարգ, իսկ Սահակ Պարթևի հեղինակած կարգը կցել Առաջին Մաղկաղարդի կարգին:

²² Յակոբեան, էջ 67:

²³ Հայր Գաբրիէլ Աւետիքեան, Բացատրութիւն Շարականաց, Վննետիկ, Ս. Ղազար, 1814, էջ 216-217:

²⁴ Աբեղեան, Երկեր, էջ 549:

THE FIRST ARMENIAN HYMNOLOGISTS

(Summary)

HENRIK BAKHCHINYAN

litart.yerevan@gmail.com

Early medieval Armenian poetry was formed in the first half of the fifth century in the form of church hymnography.

The first original Armenian hymns, which were later on called *Sharakans*, were authored by Mesrop Mashtots and Catholicos Sahak Partev. Both based these hymns on the musical scores they composed for the psaltry which they had compiled based on the Armenian church calendar of feasts (*tonatsuyts*).

Mashtots wrote the repentance *sharakans* of lent, while Sahak Partev wrote the holy week hymns. Both in terms of phrasing and style these were dependent on the biblical texts. Generally, however, they were original both as poems and as musical scores.

Alongside religious themes and concepts, the first Armenian hymns expressed the thoughts, emotions and sentiments of the contemporary individual, as well as his/her human and humane feelings. As such, Mashtots and Sahak Partev were the initiators of Armenian medieval self-authored poetry. This poetry anchored itself on the poetic heritage of Mashtots and Sahak Partev and established its own niche in world poetry.

